Հոդվածի հղումը. Մելքումյան Մ., Պարսյան Ս., Առաքելյան Ա., Մելքումյան Զ., (2023), ՀՀ տնտեսական առաջընթացն ապահովող հիմնայուները գլոբալ աշխարհաքաղաքական տեղաշարժերի պայմաններում, Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 2(2), 7-29, DOI: 10.52174/29538114_2023.2-7
Ներկայացվել է խմբագրություն՝ 29.06.2023 թ.
Ուղարկվել է գրախոսության՝ 03.07.2023 թ.
Երաշխավորվել է հրապարակման՝ 10.11.2023 թ.

ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
https://orcid.org/0000-0003-1048-4056

ՍՈՒՐԵՆ ՊԱՐՍՅԱՆ
ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0003-0561-3052

ԱՐԹՈՒՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0003-4542-2031

ԶԱՐՈՒՀԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0002-0473-1965

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԻՄՆԱՍՅՈՒՆԵՐԸ ԳԼՈԲԱԼ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

2022 թվականին տեղի ունեցած գլոբալ աշխարհաքաղաքական տեղաշարժերը էապես փոխեցին համաշխարհային տնտեսական կյանքի օրինաչափություններն ու կանոնները, որի հետևանքով գրեթե բոլոր պետություններում ի հայտ եկան նաև տնտեսական անվտանգության հիմնախնդիրներ: Տնտեսական զարգացման այս անորոշ հեռանկարներից անմասն չմնաց նաև մեր երկիրը: Մի կողմից՝ ստեղծվում են

տնտեսական կյանքի աշխուժացման առանձին տարրեր, մյուս կողմից՝ նորանոր ռիսկեր: Ունենալով փոքր տնտեսություն՝ Հայաստանի Հանրապետությունն առավելագույն չափով է կրում վերը նշված տնտեսական տեղաշարժերի ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքները: Հետևաբար՝ հոդվածի նպատակն է ուսումնասիրել և կատարելագործել Հայաստանի զգալի առաջընթացն ապահովող հիմնական ուղղությունները: Տնտեսական քաղաքականության տարբեր ուղղությունները պետք է համադրվեն, հակառակ դեպքում դրանց արդյունավետությունը շատ ցածր կարող է լինել: Ներկայում Հայաստանի տնտեսության համար տնտեսական աճը ապահովող ոլորտներ են շինարարությունը, ՏՏ-ն, արդյունաբերությունը, բանկային և հանրային սննդի ոլորտները: Չնայած որոշ հայկական ՏՏ ստարտափ ընկերությունների միջազգայնորեն գրանցած լուրջ հաջողություններին, այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ գլոբալ լուծումներ մշակող և միջազգային շուկաներ մուտք գործած ստարտափ ընկերությունների թիվը խիստ փոքր է, ինչը չի նպաստում էկոհամակարգի առավել արագ և կայուն զարգացմանը:

Հիմնաբառեր. *արդյունաբերություն, շինարարություն, մրցակցություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ստարտափներ*

JEL: L60, L74

DOI: 10.52174/29538114_2023.2-7

Ներածություն: Այսուհետ 2022 թվականը համաշխարհային տնտեսական պատմության մեջ, թերևս, հիշատակվելու է որպես աշխարհաքաղաքական և տնտեսական տեկտոնիկ ցնցումների և սոցիալ-տնտեսական կյանքի՝ երկար տարիներ գործող կանոնների ու օրինաչափությունների կտրուկ տեղաշարժերի տարի: Ռուս-ուկրաինական հակամարտությունը, որն ընդամենը մեկ տարվա ընթացքում հասցրեց հարվածի տակ դնել աշխարհի գրեթե բոլոր պետությունների տնտեսական-անվտանգային գործող կառուցակարգերը, դեռևս չի դադարում: Ավելին՝ փոխադարձ կիրառվող պատժամիջոցների ծավալներն ընդլայնվում են ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական ուղղություններով:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել և կատարելագործել Հայաստանի զգալի առաջընթացն ապահովող հիմնական ուղղությունները:

Հոդվածի արդիականությունն այն է, որ գլոբալ աշխարհաքաղաքական ցնցումների պայմաններում յուրաքանչյուր երկիր պետք է ունենա սեփական զարգացման մոդելը՝ հաշվի առնելով իր տնտեսության հիմնական առավելություններն ու հնարավորությունները: Նորանկախացման շրջանի տնտեսական ցուցանիշների պարզ ուսումնասիրության արդյունքում կարելի է արձանագրել, որ Հայաստանի տնտեսությունը, ինչպես համաշխարհային տնտեսությունը, պարբերաշրջանային զարգացում է արձանագրել, ինչը պայմանավորված է ներքին և արտաքին գործոններով:

Այսպես՝ Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումների համաձայն, 2023 թվականին համաշխարհային տնտեսության աճը կկազմի 2.9 տոկոս, իսկ 2024 թվականին՝ 3.1 տոկոս: Գնաճի մակարդակը 2023 թվականին կանխատեսվում է 6.6 տոկոս, իսկ 2024 թվականին՝ 4.3 տոկոս[1]:

[1] Տե՛ս Intarnational Monetary Fund, World Economic Outlook Update, Inflation Peaking amid Low Growth, 2023 JAN, https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2023/01/31/world-economic-outlook-update-january-2023

Չնայած 2022 թվականի սկզբին գլոբալ տնտեսական ցնցումների ֆոնին կատարված կանխատեսումներին՝ Հայաստանի Հանրապետության տնտեսությունը պատվով հաղթահարեց 2022 թվականը: Դրամի արժևորումը մեծապես նպաստեց գնաճի զսպմանը և ներմուծման էժանացմանը:

Սպառողական գների ինդեքսը 2022 թվականին կազմեց 8.6 տոկոս[2], ինչը 0.2 տոկոսային կետով ցածր է համաշխարհային գնաճի մակարդակից և ամենացածրն է ԵԱՏՄ անդամ երկրների ցուցանիշների շարքում: Այսպես՝ 2022 թվականին Ռուսաստանի Դաշնությունում գնաճը կազմել է 11.9 տոկոս, Բելառուսում՝ 16.5 տոկոս, Ղազախստանում՝ 11.3 տոկոս, իսկ Ղրղզստանում՝ 17.5 տոկոս[3]: Հարկ է նշել նաև, որ համաշխարհային տնտեսության գնաճի միջին մակարդակը կազմել է 8,8 տոկոս[4]: Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ Հայաստանում գնաճի մակարդակը համաշխարհային տնտեսության միջին ցուցանիշից ցածր է եղել 0,2 կետով:

Գրականության ակնարկ: Հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծման համար որպես տեսական և մեթոդական հիմք են ծառայել տնտեսագիտության դասական և ժամանակակից տեսությունների հիմնական դրույթները, հայրենական և արտասահմանյան հետազոտողների աշխատությունները, ոլորտը կարգավորող օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերն ու հայեցակարգերը, մասնավորապես՝ «Արդյունաբերական քաղաքականության մասին» ՀՀ օրենքը, Հարկային օրենսգիրքը, «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, «Արտահանմանը միտված արդյունաբերական զարգացման» հայեցակարգը, «Թվային Հայաստան» նորարարական հաբը և այլն:

Հետազոտության համար որպես տեղեկատվական հիմք են ծառայել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի հաշվետվությունները, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, էկոնոմիկայի նախարարության, ֆինանսների նախարարության, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի, Ձեռնարկությունների բիզնես ինկուբատորի, ստարտափ ընկերությունների և ստարտափ էկոհամակարգի զարգացումը խթանող կազմակերպությունների պաշտոնական տվյալները և էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրները: Միաժամանակ ուսումնասիրվել և ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի, էկոնոմիկայի նախարարի մի շարք հայտարարություններ:

Արդյունաբերական քաղաքականությունը կամ, ինչպես հաճախ անվանում են, արդյունաբերության կառուցվածքային զարգացման քաղաքականությունը հանդես է գալիս ուղղորդված և արտահայտում է պետության տնտեսական քաղաքականության նյութականացման հիմնական բաղադրիչներից մեկը: Այն նախանշում է տնտեսական աճի ապահովման և տնտեսության ին-

---

[2] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, https://armstat.am/am/?nid=12&id=07001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC

[3] Տե՛ս https://www.statista.com/statistics/271376/inflation-rate-in-russia/

[4] Տե՛ս Intarnational Monetary Fund, World Economic Outlook Update, Inflation Peaking amid Low Growth, 2023 JAN, https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2023/01/31/world-economic-outlook-update-january-2023

տենսիվացման մակարդակի բարձրացումը, դրանց մեխանիզմների մշակման և իրականացման ուղղությունները, որոնք անմիջականորեն առնչվում են պետության տնտեսական քաղաքականության մնացած բոլոր բաղադրիչներին (ուղղություններին): Այսինքն՝ եթե այլ ոլորտներում տնտեսական քաղաքականության կիրառման շրջանակները որոշված են ըստ տվյալ ոլորտի առանձնահատկությունների, ապա արդյունաբերական քաղաքականությունն ամբողջապես կախված է պետության կողմից իրականացվող տնտեսության ինդուստրացման մակարդակից՝ սերտաճելով պետության ընդհանուր տնտեսական քաղաքականության հետ:

Ըստ պրոֆեսոր Մ. Մելքումյանի՝ նորամուծական գործունեության գերակա ուղղություններ են համարվում բարձր տեխնոլոգիական, նորարարական ներդրումներով, տեղեկատվական տեխնոլոգիաներ օգտագործող ձեռնարկությունները: Սակայն փոքր նորամուծական ձեռնարկությունների համար, հիմնականում թանկության պատճառով, այդպիսի գործունեության ծավալումը գրեթե անմատչելի է: Ձեռնարկության զարգացման նպատակով այս կարևոր հնարավորություններից օգտվելու համար բիզնես ինկուբատորների, տեխնոպարկերի, արդյունաբերական գոտիների անհրաժեշտությունն ակնհայտ իրողություն է[5]:

Յ. Մոտոյամայի և Կ. Նոուլթոնի «Ստարտափ էկոհամակարգում կապերի ուսումնասիրություն» աշխատության մեջ ՏՀԶԿ երկրների վերջին տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ստարտափ ընկերությունների գոյատևման միջին մակարդակը հիմնադրումից երեք տարի հետո կազմում է 60 տոկոս, մինչդեռ 5-րդ և 7-րդ տարիներին համապատասխանում են 50 և 40 տոկոս մակարդակները: Երկրների միջև տարբերությունները մեկնաբանվում են տարբեր որոշիչ գործոններով, որոնք առնչվում են նորարարական ձեռնարկության համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ կարողություններին՝ դրանով իսկ ընդգծելով ստարտափ էկոհամակարգերի զարգացման կարևորությունը[6]:

Ըստ Քրիստինե Արշակյանի՝ զուգահեռաբար ձևավորվող բիզնես-հրեշտակների ցանցերը (BANA, AICA, STAN), տարբեր ինկուբացիոն և աքսելերացիոն ծրագրերը, մատչելի աշխատանքային տարածքներ առաջարկող ենթակառուցվածքների ցանցի ընդլայնումը, ինչպես նաև ավելի մեծածավալ միջոցառումների կազմակերպումը, որոնցում ներգրավված են միջազգային հեղինակություն ունեցող մենթորներ, խորհրդատուներ, ներդրողներ, նպաստեցին Հայաստանում ստեղծվող ստարտափ ընկերությունների թվի տարեցտարի աճին[7]:

Շուկայական տնտեսության արդյունավետության կարևորագույն պայմանն ու հիմքը ազատությունն է՝ գործելու և ընտրելու: Մրցակցային միջավայ-

---

[5] Տե՛ս **Մելքումյան Մ.** և ուրիշ., Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում, ուսումնական ձեռնարկ, Եր., 2018, էջ 75:

[6] Տե՛ս Intarnational Monetary Fund, World Economic Outlook Update, Inflation Peaking amid Low Growth, 2023 JAN, https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2023/01/31/world-economic-outlook-update-january-2023

[7] Տե՛ս **Արշակյան Ք.,** Հայկական ստարտափ էկոհամակարգի բաղադրիչային ազդեցությունները և զարգացման խնդիրները, «Գիտական Արցախ», N 3(14), 2022, էջ 204-222, https://cyberleninka.ru/article/n/the-effects-of-components-and-development-challenges-of-the-armenian-startup-ecosystem/viewer

րի ձևավորմամբ և մրցակցության զարգացմամբ, շուկայական տնտեսության յուրաքանչյուր սուբյեկտի տնտեսական ազատության ապահովմամբ զբաղվում է պետությունը՝ իրականացնելով հակամենաշնորհային քաղաքականություն, հակամենաշնորհային օրենքների մշակման, ընդունման և իրականացման, մրցակցային շուկայում «խաղի կանոնների» հաստատման միջոցառումների համակարգի միջոցով: ԱՄՆ-ում ընդունված առաջին հակատրեստային օրենսդրությունը (1883 թ. Ալաբամայի, 1887 թ. Կանզասի նահանգներում հակատրեստային օրենքները, այնուհետև՝ 1889–1890 թթ., նմանատիպ օրենսդրություն ընդունվել է Մենի, Հյուսիսային Կարոլինայի, Թեննեսի, Միչիգանի, Հարավային Դակոտայի, Կենտուկիի, Միսիսիպիի նահանգներում, իսկ 1890 թ. դաշնային մակարդակով՝ Շերմանի օրենքը) նախևառաջ ուղղված էր մենաշնորհների դեմ:

Արդի տեխնիկայի և տեխնոլոգիաների արագ զարգացումը, արհեստական բանականության, մեքենայական ուսուցման և դրանց հիման վրա ստեղծվող տարատեսակ ապրանքների ու ծառայությունների տարածումը ամբողջովին փոխում են տնտեսության զարգացման վերաբերյալ պատկերացումները և ստիպում մտածել նոր ռազմավարության ընտրության ուղղությամբ: Այս պարագայում գործնական մոտեցումները պետք է գերակայեն տեսական դատողություններին՝ նկատի ունենալով առաջին հերթին գործող բիզնեսների արդյունքները և հիմնախնդիրները:

Հայաստանի Հանրապետությունում ստարտափ ընկերությունների գործունեությունը խթանելու համար անհրաժեշտ է ունենալ զարգացած ստարտափ էկոհամակարգ, որն ապահովում է ընկերությունների ստեղծման և զարգացման միջավայրը, ենթակառուցվածքները, ֆինանսական ինստիտուտները, կադրերը և այլն:

Հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտության մեջ հիմնականում օգտագործվել են քանակական, որակական, ինդուկտիվ, դեդուկտիվ, վերլուծական, սինթետիկ, գործոնային, գիտական, վիճակագրական, տնտեսամաթեմատիկական, պատմական և համեմատական մեթոդները: Նշվածներից յուրաքանչյուրն ունի առանձնահատկություններ և բնորոշ գծեր, որոնք օգտագործվել են հետազոտությունում ներկայացված տվյալների վերլուծության նպատակով:

Այսպիսով՝ վերոնշյալ մեթոդների կիրառությամբ հնարավորություն ենք ունեցել հետազոտությունում ներկայացնել վերջին տարիների ընթացքում Հայաստանի տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները, առաջնահերթությունները, ռուս-ուկրաինական հակամարտության ազդեցությունը, ռուս ռելոկանտների* ներհոսքը, տրանսֆերտների և արտահանման ծավալների աննախադեպ աճը: Օգտագործելով ինդուկցիայի մեթոդը՝ մասնավոր դեպքերից ու փաստերից ընդհանուր եզրակացություններ ենք կատարել, այդ թվում՝ վերհանել ենք հայեցակարգային սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ և ներկայացրել խնդիրների լուծման հայեցակարգային առաջարկություններ: Համեմատության մեթոդի օգնությամբ ներկայացվել է Հայաստանի և Վրաստանի համախառն ներքին արդյունքի կազմն ու կառուցվածքը:

---

* Արտասահմանյան ընկերությունների՝ իրենց գրասենյակներով տեղափոխման գործընթացը՝ ռելոկացիա, տեղափոխվածները՝ ռելոկանտ:

Հետազոտության շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքներն ունեն ինչպես տնտեսատեղեկատվական, այնպես էլ կիրառական նշանակություն, քանի որ ներկայումս Հայաստանի տնտեսական աճը ապահովող գործոնները խիստ ժամանակավոր են, և դրանց կտրուկ փոփոխությունը կարող է հանգեցնել մեծ տնտեսական ճգնաժամի, ինչպիսին արձանագրվեց 2009 թվականին, երբ ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով նվազեցին Հայաստանի շինարարության ոլորտում ներդրումները, ինչը հանգեցրեց աննախադեպ՝ 14,1 տոկոս անկման: Հետագա տարիների ընթացքում Հայաստանի Կառավարությունը պարտադրված եղավ միջազգային դոնոր կազմակերպություններից և երկրներից ներգրավել վարկային միջոցներ: Պատմական մեթոդի կիրառությունը հնարավորություն է տվել ուսումնասիրելու և գնահատելու ապագա միտումները:

Վերլուծություն

Արդյունաբերությունը նաև երկրի անվտանգային բաղադրիչն է

Արդյունաբերությունը ոչ միայն երկրի տնտեսության շարժիչ ուժն է, այլ նաև անվտանգության կարևոր բաղադրիչը: Վերջին տարիների համավարակի և պատերազմական իրավիճակները ցույց տվեցին, որ Հայաստանը պետք է ձգտի ունենալ առանձին ապրանքների գծով մրցունակ արտադրություն և ինքնաբավության որոշակի մակարդակ, մասնավորապես՝ մշակող արդյունաբերություն, մետալուրգիա, մեքենաշինություն, քիմիական արդյունաբերություն և այլն: Հայաստանը պետք է իրականացնի ներկրման փոխարինման քաղաքականություն այս ոլորտներում:

2022 թվականին Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ն կազմել է 8 տրիլիոն 496 մլրդ դրամ, ինչը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը շուրջ 1.5 տրիլիոն դրամով: Դոլարային արտահայտությամբ 2022 թվականին ՀՆԱ-ն հասել է 19.5 մլրդ-ի, ինչն ավելի է նախորդ տարվա ցուցանիշից 5.6 ԱՄՆ մլրդ դոլարով: Հայաստանի Հանրապետությունում 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն 2018 թվականի 4196 ԱՄՆ դոլարից հասել է 6569 ԱՄՆ դոլարի[8], իսկ Վրաստանում՝ 4722 ԱՄՆ դոլարից 6671 ԱՄՆ դոլարի[9]: Հայաստանի համեմատաբար ցածր գնաճի և մեկ շնչին բաժին ընկող ՀՆԱ աճի վրա մեծ ազդեցություն է թողել դրամի՝ 25 տոկոսով արժևորումը, որն էականորեն զսպել է ներկրվող ապրանքների գների աճը, ինչպես նաև նպաստել է դոլարային արտահայտությամբ ՀՆԱ ավելի արագ ավելացմանը:

Հատկանշական է, որ չնայած Ռուսաստանից դեպի Հայաստան տեղեկատվական ոլորտի մասնագետների մեծ հոսքին, 2022 թվականին տեղեկատվության և կապի ոլորտի բաժինը ՀՆԱ-ում 2021 թվականի 3.8 տոկոսից ավելացել է ընդամենը 0.7 տոկոսային կետով՝ 2022 թվականին հասնելով 4.5 տոկոսի, իսկ կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում ավելացել է 0.2 տոկոսով՝ կազմելով 1.9 տոկոս[10]:

Այս ցուցանիշների ներկայացումը պատահական չէ: ՀՆԱ կառուցվածքի դինամիկայի վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ համաշխարհային

---

[8] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, https://www.armstat.am/file/doc/99536113.pdf

[9] Տե՛ս National Statistics Office of Georgia, https://www.geostat.ge/en/modules/categories/23/gross-domestic-product-gdp

[10] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, https://www.armstat.am/file/doc/99536113.pdf

տնտեսության կտրուկ տեղաշարժերը, որոնք մեր երկրի տնտեսության վրա թողնում են ընթացիկ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն, այդուհանդերձ, էապես չեն փոխել ՀՆԱ կառուցվածքը: Այսինքն՝ կարող ենք արձանագրել, որ տնտեսության հիմքը մնում է արդյունաբերությունը. ուսումնասիրվող տարիների ընթացքում և հատկապես 2022 թվականին դրա մասնաբաժինը ՀՆԱ-ում չի փոխվել: Ավելին, ռելոկանտների մեծ հոսքը Ռուսաստանի Դաշնությունից դեպի Հայաստանի Հանրապետություն, թվում է, պետք է զգալիորեն ավելացներ տնտեսության մյուս ոլորտների՝ տեղեկատվության և կապի, կացության և հանրային սննդի ճյուղերի մասնաբաժինը ՀՆԱ կառուցվածքում, ինչը ևս տեղի չի ունեցել: Այդ հոսքերի արդյունքում ստացվող եկամուտներն ու տնտեսական ակտիվությունը ժամանակավոր են: Դրանք, առանց պետական աջակցող քաղաքականության, չեն կարող երկարաժամկետ տնտեսական անվտանգության հիմք հանդիսանալ: Ուստի, Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության հեռանկարների հիմքում պետք է արդյունաբերությունը լինի:

Համեմատելով Հայաստանի Հանրապետության և Վրաստանի ՀՆԱ կառուցվածքները 2022 թվականին՝ տեսնում ենք, որ մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը Վրաստանի ՀՆԱ-ում շուրջ 2 անգամ գերազանցում է մեր երկրի համանման ցուցանիշը: Միևնույն ժամանակ՝ Հայաստանի Հանրապետության ՀՆԱ կառուցվածքում տեղեկատվության և կապի ոլորտի տեսակարար կշիռը ավելի է Վրաստանի համանման ցուցանիշից, սակայն ընդամենը 0.6 տոկոսային կետով[11]: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության մշակող արդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված աշխատանքներում անելիքները շատ են, իսկ տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում մեր երկրի հայտնի առավելությունները բավարար չեն ոլորտի կտրուկ զարգացման համար: ՀՆԱ կառուցվածքի համեմատական վերլուծությունը ներկայացված է աղյուսակ 1-ում:

2022 թվականին ռուսաստանցի ռելոկանտները Հայաստան բերեցին իրենց խնայողությունների մի մասը, ինչը նպաստեց ֆինանսական համակարգի երկնիշ աճին: ՀՀ բանկային համակարգը ոչ միայն մեծ օգուտներ ստացավ փոխանցումներից և կանխիկացումներից, այլ նաև ոչ ռեզիդենտների ներդրած խոշոր ավանդներից:

Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերության ոլորտում վերջին տասնամյակում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ և տեղաշարժեր, որոնց արդյունքում էապես փոխվել է արդյունաբերության ճյուղային կառուցվածքը, ձևավորվել են նոր ենթաճյուղեր և արտադրություններ, փոխվել է դրանց տեխնոլոգիական տարրը և բաղադրիչը, արդիականացվել են մի շարք տեխնիկատեխնոլոգիական արտադրություններ, որոշակի փոփոխության է ենթարկվել նաև արդյունաբերական արտահանելի արտադրանքի կառուցվածքը և աշխարհագրությունը:

[11] Տե՛ս National Statistics Office of Georgia, https://www.geostat.ge/en/modules/categories/23/gross-domestic-product-gdp

Աղյուսակ 1

Հայաստանի և Վրաստանի 2022 թ. ՀՆԱ կառուցվածքի համեմատությունը[12]

ՀՆԱ	Հայաստան	Վրաստան
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	10.4%	6.1%
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	3.8%	1.4%
Մշակող արդյունաբերություն	11.7%	20.2%
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	2.9%	2.6%
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	0.4%	0.7%
Շինարարություն	6.8%	11.6%
Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	11.8%	12.6%
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	3.7%	6.9%
Կացության և հանրային սննդի կազմակերպում	1.9%	4.3%
Տեղեկատվություն և կապ	4.5%	3.9%
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	8.0%	3.7%
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	7.9%	6.3%
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	1.1%	1.8%
Վարչարարական և օժանդակ գործունեություն	0.7%	0.9%
Պետական կառավարում և պաշտպանություն. պարտադիր սոցիալական ապահովագրություն	4.6%	4.9%
Կրթություն	2.4%	2.9%
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	5.3%	4.0%
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	2.7%	4.3%
Սպասարկման այլ ծառայություններ	0.6%	0.9%

Այդուհանդերձ, արդյունաբերության կշիռը Հայաստանի Հանրապետության ՀՆԱ կառուցվածքում դեռևս անբավարար է՝ հաշվի առնելով այն, որ Հայաստանի Հանրապետությունը վերստին պետք է դառնա արդյունաբերական երկիր, էապես պետք է զարգանան և ընդլայնվեն ռազմարդյունաբերական համալիրը, բարձր տեխնոլոգիական արդյունաբերությունը, արդյունաբերության գիտատար ճյուղերը:

Ժամանակակից աշխարհում տնտեսական իրավիճակի աշխուժացման նպատակով շատ երկրներում կիրառվում են տարբեր գործիքներ, այդ թվում՝ արդյունաբերական գոտիները, ազատ տնտեսական գոտիները: Դրանցից յուրաքանչյուրի գործարկումը և տեղաբաշխումն ունենում են որոշակի տրամաբանություն: Սակայն դրանք պետք է պարունակեն նաև համապատասխան բովանդակություն՝ հաշվի առնելով տվյալ երկրի չափերը, տեղը, դիրքը, տնտեսական կապերի որակը, անդամակցությունը այս կամ այն միությանը:

Այդ տեսանկյունից շատ կարևոր են Հայաստանի Հանրապետությունում այդպիսի գոտիների ձևավորման փաստարկումը և հետագա զարգացման հնարավորությունների գնահատումը:

Այսպես՝ ՀՀ-ում արդյունաբերական գոտիների և ազատ տնտեսական գոտիների մասով տարիներ ի վեր գործում է համապատասխան օրենսդրություն: Միաժամանակ, մենք պետք է գնահատենք, թե ԵԱՏՄ-ին ՀՀ անդա-

[12] Տե՛ս նույն տեղը:

մակցության արդյունքում որքանով են այս օրենքները սպասարկում մեր պետության շահերը նոր իրողությունների շրջանակներում:

Դեռևս 2014 թ. նոյեմբերի 19-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Արդյունաբերական քաղաքականության մասին» ՀՀ օրենքը, որն այդ պահին համարվեց մայր օրենք, այսինքն՝ ամբողջապես նոր մշակված օրենք[13]:

Օրենքը նախատեսում էր երկու կարևորագույն դրույթ. առաջին՝ ՀՀ-ն պետք է ունենա հնգամյա պետական արդյունաբերական ծրագիր, որտեղ հստակ կարձանագրվեն արդյունաբերության զարգացող հիմնական ճյուղերը, ենթաճյուղերը և արտադրանքը: Միաժամանակ, պետք է հստակ սահմանվեն արդյունաբերության և արտահանման ճյուղերի հիմնական ուղղությունները: Պետական բյուջեն իր ծրագրային հենքով նույնպես պետք է արտացոլի այդ ծրագրերի իրականացման հիմքերը:

Կարևոր էր նաև, որ դեռևս տարիներ առաջ՝ 2011 թ., ընդունվել էր «Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության» ռազմավարությունը[14], որտեղ արդեն իսկ արձանագրվել էին համապատասխան ոլորտները, օրինակ՝ կոնյակագործություն, գինեգործություն, ճշգրիտ ինժեներիա և այլն:

Օրենքի հաջորդ կարևոր դրույթը արդյունաբերական գոտիների ձևավորումն էր՝ համապատասխան ենթակառուցվածքներով, կառավարման մարմնով և այլն: Այդ համատեքստում սահմանված էին նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթները:

Ինչ վերաբերում է օրենքի երկու հիմնական դրույթների պահանջներին, ապա քննադատորեն պետք է արձանագրել, որ դրանք, ըստ էության, չեն կատարվել: Չի գործում հնգամյա պետական արդյունաբերական ծրագիրը, չունենք ձևավորված որևէ արդյունաբերական գոտի: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ:

Արձանագրենք նաև, որ, ըստ «Արդյունաբերական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետի, արդյունաբերական գոտին առանձնացված տարածք է, որը համապատասխանում է օրենքով սահմանված պահանջներին և որտեղ իրականացվում է բացառապես արդյունաբերական գործունեություն: Արդյունաբերական գոտին կարող է ունենալ ազատ տնտեսական գոտու կարգավիճակ (նշենք, որ կարող է և չունենալ)[15]:

Արդյունաբերական գոտիների ստեղծման վերաբերյալ կան տարբեր մասնագիտական մոտեցումներ, սակայն ՀՀ-ում դրանց տեղաբաշխման հիմնավորման տեսանկյունից կարելի է նշել հետևյալը.

- Խորհրդային Հայաստանը եղել է արդյունաբերական երկիր, իսկ դա նշանակում է, որ մեր երկրում մասամբ պահպանվել են արդյունաբերական ենթակառուցվածքները, դեռևս կան դրանք սպասարկող արտադրամասեր՝ վերանորոգման, մեխանիկական, գալվանական և այլն: Կան նաև հասուն և ավագ տարիքի մասնագետներ:
- ՀՀ-ում կան որոշ քաղաքներ՝ Չարենցավան, Հրազդան, Արթիկ, Վանաձոր, Գյումրի, Քաջարան, Կապան, Աբովյան, Գագարին և այլն, որ-

[13] Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարություն, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ կայքէջ, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=94508

[14] Տե՛ս ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայքէջ, https://mineconomy.am/media/6247/razm.pdf

[15] Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարություն, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ կայքէջ, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=94508

տեղ պահպանվել են դեպի արտադրական ձեռնարկություններ տանող երկաթուղային գծերը, պահեստները, բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերը, ենթակայանները:

- Արտադրական ձեռնարկությունների մի մասը փոքր ծավալի վերակառուցման արդյունքում կարող է ստանալ մեծածավալ պետական պատվեր ռազմաարդյունաբերական համալիրի կողմից, այդ թվում՝ վերանորոգումների մասով:

Այսպես օրինակ՝ Չարենցավանում և Հրազդանում առկա են արդյունաբերական գոտիների ձևավորման համապատասխան պայմաններ:

Արդյունքում՝ կզարգանան այդ քաղաքները, մարդիկ կունենան աշխատանք: Հնարավոր կլինի քննարկել նաև ԵԱՏՄ շուկաներ դուրս գալու և ապրանքներ իրացնելու հարցը:

Ինչ վերաբերում է շինարարության հեռանկարներին (հատկապես բազմաբնակարան շենքերի կառուցապատմանը սպասարկող), օրինակ՝ բետոնի և մետաղական հանգույցների՝ տեղում արտադրության կազմակերպմանը, ապա ՀՀ-ում արդեն իսկ գործում են ամրանների արտադրության մեկ խոշոր (Չարենցավանում) և երկու փոքր արտադրություններ (Արմավիրում):

Չարենցավանը կդառնա բազմապրոֆիլ արդյունաբերական քաղաք, այստեղ արդեն իսկ գործում են «Ասկե գրուպ» ամրանների և պրոֆիլների ձեռնարկությունը, ձուլման արտադրություն, որտեղ արտադրվում են Քաջարանի պղնձամոլիբդենային գործարանի համար անհրաժեշտ ապրանքներ:

Ուստի և՛ արդյունաբերության, և՛ շինարարության զարգացման համար անհրաժեշտ են լոգիստիկ ենթակառուցվածքներ:

Հրատապ պետք է զարգացնել նաև արդյունաբերական հիպոթեկի ինստիտուտը: Ինչպես տեսանք, բազմաբնակարան շենքերի առումով դա ձևավորել է շինարարական բում: Այժմ ժամանակն է նույնն իրականացնել արտադրական շինարարության մասով: Կարծում ենք՝ սա նույնպես ժամանակի ընթացքում կտա իր դրական արդյունքը:

Տեսնում ենք նաև, որ 2023 թվականի անցած ութ ամիսների ընթացքում տնտեսական ակտիվությունը ՀՀ-ում էապես դանդաղել է մի կողմից՝ բազային ցուցանիշի բարձր լինելու հետևանքով, մյուս կողմից՝ ռուսական ռուբլու «թուլացման», ինչպես նաև ներքին մի շարք գործոնների արդյունքում:

Շինարարության ոլորտի ակտիվությունը և ռիսկերը

Ներկայումս Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ապահովման կարևորագույն մարտահրավերը անվտանգային խնդրի լուծումն է ինչպես Հայաստան-Ադրբեջան-Թուրքիա, այնպես էլ առավել գլոբալ տարածաշրջանային խնդիրների մակարդակով: Շինարարության ոլորտը կոչված է ապահովելու երկրի ենթակառուցվածքների զարգացումը, ինչը նպաստում է տնտեսության երկարաժամկետ աճին:

2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո մեր հանրապետությունում ստեղծվել էր բավականին անկայունդրություն ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական առումներով, ավելին՝ ռուս-ուկրաինական հակամարտությունը ձևավորեց ՀՀ-ի համար մի նոր իրավիճակ, երբ Հայաստանի Հանրապետության ֆինանսաբանկային և բիզնես վարչարարության համակար-

գերը բարենպաստ ազդեցություն թողեցին դեպի ՀՀ ռուսաստանաբնակ գործարարների ազատ ներհոսքի վրա, ընդ որում, կարճաժամկետում խոսքը մոտավորապես 100–120 հազար մարդու մասին է: Միայն ՀՀ բանկերում, ըստ ՀՀ ԿԲ տվյալների, վերջին մեկ տարում բացվել են 103 հազար ավանդային և բանկային հաշիվներ, գրանցվել են հազարավոր ԱՁ-ներ և ՍՊԸ-ներ[16]:

Այս ամենի արդյունքում Հայաստանի տնտեսության համար ստեղծվել է հիմնականում դրական մթնոլորտ և զարգացում:

Այսպիսով՝ էապես ընդլայնվել է գործարար շրջանառությունը, ՀՀ ներքին շուկայում աճել է պահանջարկը ինչպես ծառայությունների ոլորտում, մանրածախ առևտրում, անշարժ գույքի վարձակալության շուկայում, այնպես էլ երկնիշ աճ է գրանցել արտահանումը:

Ստեղծված իրավիճակի դրական կամ բացասական կողմերը գնահատելու համար անհրաժեշտ է տնտեսական և գործարար երևույթների նկատմամբ համալիր մոտեցում: Նախ ներկայացնենք Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի ճյուղային կառուցվածքը 2022 թվականին:

Այսպես՝ շուրջ 20 միլիարդ ԱՄՆ դոլար կազմող ՀՆԱ կառուցվածքը այսպիսին է՝

- Արդյունաբերություն - 15,5 տոկոս,
- Գյուղատնտեսություն - 11,5 տոկոս,
- Շինարարություն - 8,5 տոկոս,
- Ծառայություններ և առևտուր - 65,5 տոկոս[17]:

Ըստ վերոնշյալ ցուցանիշների՝ ակնհայտ է, որ ՀՀ-ում տնտեսության իրական հատվածի տեսակարար կշիռն անկում է գրանցել: Հատկանշական է, որ ներդրումների հիմնական ուղղությունը ծառայությունների ոլորտն է դարձել, այն դեպքում, երբ մեծ ավելացված արժեքը հիմնականում ստեղծվում է հենց տնտեսության իրական հատվածում: Մասնավորապես՝ արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում է, որ ներդրումներն իրականացվում են երկարատև ժամանակահատվածի համար, որն իր ծավալներով ներկայում էապես զիջում է ծառայությունների ոլորտին: Այնուամենայնիվ, կան նաև բավականին հետաքրքիր միտումներ ՀՀ-ում ներդրումների վեկտորի վերաբերյալ: Այսպես՝ ակնհայտ է, որ ՀՀ-ում արդեն մի քանի տարի է, ինչ արձանագրվում է շինարարական բում: Դա, իհարկե, պայմանավորված է առաջին հերթին եկամտային հարկի միջոցով հիպոթեկային վարկերի տոկոսների մարման հնարավորության իրավական կարգավորման առկայությամբ: Միայն այս իրավական կարգավորումը, որը Երևան քաղաքում գործելու է մինչև 2025 թվականի հունվարի 1-ը, լրջագույն շինարարական աշխուժություն է առաջացրել կառուցապատող ընկերությունների գործունեության ոլորտում, որը շարունակվում է մինչ այժմ: Շինարարության ոլորտի աջակցության այս ծրագիրը ոչ միայն սոցիալական, այլ նաև հակաճգնաժամային բնույթ ուներ: Այսպես՝ մինչև 2008 թվականը ՀՀ ՀՆԱ կառուցվածքում շինարարության տեսակարար կշիռը 27,5 տոկոս էր, իսկ ներկայում 8–8,5 տոկոս է: 2009 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո հարյուրավոր նորակա-

[16] Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի կայքէջ, https://www.cba.am/am/sitepages/statmonetaryfinancial.aspx

[17] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, https://www.armstat.am/file/doc/99536113.pdf

ռույց բազմաբնակարան շենքերի շինարարությունը կիսատ մնաց, և մի կողմից՝ տուժեցին այն քաղաքացիները, որոնք պետք է բնակարանամուտ տոներին այդ շենքերում, մյուս կողմից՝ շինարարները, որոնք, փաստորեն, սնանկանում էին մեծ վարկերը չմարելու հետևանքով:

Ուստի, դրանից 6-7 տարի անց ՀՀ Կառավարության կողմից որոշում է կայացվել մի կողմից՝ սոցիալական բնակարանաշինության ընդլայնման, մյուս կողմից՝ վերը նկարագրված կիսակառույցները ավարտին հասցնելու համար կիրառել եկամտային հարկի վերադարձ հիպոթեկային վարկի տոկոսը մարելու նպատակով, եթե բնակարանը ձեռք է բերվել կառուցապատողից: Ըստ էության, բնակարան ձեռք բերողները ստանում են անտոկոս վարկեր:

Սակայն այս հատուկ ռեժիմը 2023 թվականի ՀՀ պետական բյուջեի վրա տարեկան դրել է շուրջ 50 միլիարդ դրամի ծախսային բեռ: Կարգավորման գործունեության առաջին մի քանի տարիների ընթացքում բարձր աշխատավարձ ստացող մեր համաքաղաքացիները կարողացան ձեռք բերել մեծ մակերեսով մի շարք բնակարաններ, որովհետև որևէ սահմանափակում չկար ձևակերպվող գույքի քանակի, գնի և մակերեսի մասով: Արդյունքում, ըստ էության, չգնահատելով այս իրավակարգավորման սոցիալական կողմը օգտագործեցին որպես ներդրումային գործիք՝ բնակարանները գնելով և վարձով տալով: Ուստի, հետագայում սահմանափակումներ դրվեցին ինչպես եկամտային հարկի ծավալի, այնպես էլ բնակարանի արժեքի վրա: Օրինակ՝ վերջինիս առավելագույն գինը չպետք է գերազանցի 55 միլիոն ՀՀ դրամը[18]:

Դրա հետ միասին, վերջին երկու տարիների ընթացքում, հատկապես Երևանում, հողերի վաճառքի գները կտրուկ բարձրացան, թանկացան նաև նոր կառուցվող բնակարանների գները: Դա նշանակում է՝ առայժմ որքան ավելանում է բնակարանների առաջարկը, չի նահանջում նաև պահանջարկը ինչպես ՀՀ-ում բնակվողների, այնպես էլ երկրից դուրս բնակվողների հաշվին:

Իհարկե, վերջին 6–8 ամիսների ընթացքում տեղի ունեցավ գների անանախադեպ աճ, և պատահական չէ, որ վերջերս ՀՀ ԿԲ նախագահ Մ. Գալստյանը նշեց, որ անշարժ գույքի շուկայում առկա է գների շուրջ 25 տոկոս ուռճացում: Թվում է՝ դրա հետևանքով որոշ չափով կկրճատվի հիպոթեկային վարկերի կշիռը[19]:

Նշենք, որ ՀՀ վարկային պորտֆելը շուրջ 4 տրիլիոն դրամ է, որից 1 տրիլիոնը սպառողական վարկերն են, շուրջ 850 միլիարդը՝ հիպոթեկային վարկերը[20]: Այս իրավիճակում արհեստականորեն աճած՝ անշարժ գույքի ձեռքբերման նպատակով տրամադրվող հիպոթեկային վարկերը կարող են բանկային համակարգի համար խիստ ռիսկային լինել: Ուստի, պատահական չէ ՀՀ ԿԲ նախազգուշացումը, ինչը սպասելի է առաջիկայում: Կարծում ենք՝ կլինի անշարժ գույքի գնի որոշակի նվազում (10-15%) և կայունացում:

---

[18] Տե՛ս ՀՀ Կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1321-Ն «Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով ֆիզիկական անձանց կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանելու մասին» որոշում, կետ 6:

[19] Տե՛ս https://news.am/arm/news/757825.html

[20] Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի կայքէջ, https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx

Ինչ վերաբերում է բազմաբնակարան շենքերի կառուցապատման բիզնեսին, ապա այս ոլորտում կլինի շահութաբերության որոշակի անկում: Դա պայմանավորված է մի կողմից՝ սպասվող գների որոշակի նվազմամբ, մյուս կողմից՝ ԱՄՆ դոլար – ՀՀ դրամ փոխարժեքների 25 տոկոս դոլարի նվազմամբ, իսկ դոլարայնացված տնտեսությունում 480 դրամով ձեռք բերված 1 դոլարը այժմ փոխարինվել է 390 դրամով, ինչը նշանակում է 22 տոկոս շահութաբերության նվազում:

Շինարարներն աշխատել և աշխատում են ՀՀ դրամով, իսկ ընդհանրապես աճել ու աճում են ամրանների, բետոնի և աշխատուժի գները:

Հայաստանի առանձին ապրանքային շուկաների մրցակցային մարտահրավերները

Հայաստանի տնտեսական առաջընթացի հիմնասյուներից է առողջ մրցակցային դաշտի առկայությունը: Տարիներ շարունակ գերիշխող դիրք ունեցող տնտեսավարողների ձևավորումը և գործունեությունը հայաստանյան շուկայում էապես թուլացրել էլ Հայաստանի ներդրումային ներգրավչությունը: Այս բաժնում ուսումնասիրվել են Հայաստանի համար տնտեսական, այդ թվում՝ պարենային անվտանգության տեսանկյունից առանցքային նշանակություն ունեցող ապրանքային շուկաներ:

Ինչպես հայտնի է, մրցակցության զարգացումը նպաստում է ապրանքների և ծառայությունների որակի բարելավմանը, գների նվազեցմանը, ստիպում է տնտեսավարող սուբյեկտներին իրականացնել ծախսերի օպտիմալացում, գործել առավելագույնս արդյունավետ կերպով: Այս համատեքստում հայ հանրության կողմից մշտապես մեծ ուշադրության կենտրոնում են գտնվում սննդամթերքի շուկաների մրցակցային իրավիճակը, մրցակցության զարգացումը խոչընդոտող հնարավոր գործոնները: Օրինակ՝ կաթնամթերքի մասով ՀՀ-ն ինքնաբավ է՝ պահանջարկի 90-99 տոկոսն ապահովվում է տեղական արտադրության հաշվին: Տնտեսավարող սուբյեկտները, որպես կանոն, իրենց գործունեությունն իրականացնում են որոշակի ապրանքային շուկաներում, այսինքն՝ մասնագիտացած են որոշակի ապրանքատեսակների արտադրության մեջ. որոշները գործում են պանրի, մյուսները՝ մածունի, թթվասերի, կաթնաշոռի, յոգուրտի և կեֆիրի շուկաներում:

Ուշագրավ է, որ «Պանիր», «Մշակված կաթ» և «Մածուն» ապրանքային շուկաները 2019 և 2020 թթ. տվյալներով ունեցել են կենտրոնացվածության միջին մակարդակ, իսկ «Թթվասեր» և «Կաթնաշոռ» ապրանքային շուկաներում նույն ժամանակահատվածում գործել են խոշոր ընկերություններ, այն դեպքում, երբ «Յոգուրտ» և «Կեֆիր» ապրանքային շուկաները նույն ժամանակահատվածում ունեցել են կենտրոնացվածության բարձր մակարդակ[21]:

Ոլորտում հիմնական խնդիրն այն է, որ հում կաթ ձեռք բերողները գնի հարցում թելադրող են, քանի որ հում կաթը շուտ փչացող ապրանք է և հնարավոր չէ երկար պահել: Միաժամանակ, 3.6 տոկոս կաթի ձեռքբերման համար սահմանվում է կաթի բազիսային գին, սակայն դրա հաշվարկման որևէ մեխանիզմ չի նշվում, ինչը գյուղացիական տնտեսությունների համար ռիսկեր

[21] Տե՛ս Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կայքէջ, Կաթի և կաթնամթերքի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաների ուսումնասիրության արդյունքները, 2021, 73 էջ, http://competition.am/wp-content/uploads/2022/03/Diary-1.pdf

և անորոշություն է առաջացնում մրցակցության տեսանկյունից: Բացի այդ, գյուղացիական տնտեսությունները չեն կարողանում ապահովել որակական ցուցանիշների բավարար մակարդակ (թթվայնություն, յուղայնության մակարդակ և այլն), այսինքն՝ որակական մրցակցությունը բացակայում է: Արդյունքում՝ ստացվում է, որ 1 լիտր շշալցված ջուրն ավելի թանկ արժե, քան կաթը:

Նշված խնդրի լուծման տեսանկյունից էական է գնի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության ապահովումը թե՛ գյուղացիական տնտեսությունների, թե՛ կաթնամթերք արտադրողների համար, ինչը կարող է բարձրացնել մրցակցության արդյունավետությունը՝ շուկան դարձնելով ավելի մրցակցային և թափանցիկ:

Հավի միսը ևս բնակչության սննդամթերքի սպառման կառուցվածքում զգալի մասնաբաժին ունի՝ հաշվի առնելով, որ մսամթերք ձեռք բերելիս բավականին հաճախ սպառողները նախընտրում են հենց հավի միս՝ ելնելով դրա համեմատաբար ցածր գնից և սննդարար հատկություններից: Սակայն, ի տարբերություն կաթնամթերքի, որի դեպքում պահանջարկի գերակշիռ մասն ապահովվում է տեղական արտադրության հաշվին, հավի մսի դեպքում պատկերն այլ է՝ պահանջարկի 60%-ից ավելին ապահովվում է ներմուծման հաշվին, ինքնաբավությունը շուրջ 26% է:

2014–2020 թթ. հավի մսի ներմուծում իրականացնող տնտեսավարողների թիվն աճել է շուրջ 44%-ով, ինչի արդյունքում միևնույն ժամանակահատվածում զգալի նվազել է առավել խոշոր ներմուծման ծավալ ունեցող տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժինը: Չնայած նույն ժամանակահատվածում հավի մսի արտադրությամբ զբաղվող տնտեսավարողների թիվը ևս աճել է, այդուհանդերձ, արտադրության ծավալները շարունակում են զգալիորեն զիջել ներմուծման ծավալներին:

2018–2020 թթ. «հավի միս» ապրանքային շուկան ունեցել է կենտրոնացվածության միջին մակարդակ, խաղացողների թիվն աճել է, ինչը վկայում է շուկա մուտքի արգելքների բացակայության մասին[22]: Քանի որ հավի միսը հիմնականում ներմուծվում է, երրորդ երկրներից ներմուծման մաքսատուրքի աճի պարագայում էական է տեղական արտադրության աճի ապահովումը:

Հայաստանի զարգացումը՝ թվային օրակարգ

Արդի տեխնիկայի և տեխնոլոգիաների արագ զարգացումը, արհեստական բանականության, մեքենայական ուսուցման և դրանց հիման վրա ստեղծվող տարատեսակ ապրանքների ու ծառայությունների տարածումը ամբողջովին փոխում են տնտեսության զարգացման վերաբերյալ պատկերացումները և ստիպում մտածել նոր ռազմավարության ընտրության ուղղությամբ: Ժամանակակից մասնագիտական գրականության մեջ թվային տնտեսությունը բնութագրվում է որպես թվային հաշվիչ տեխնոլոգիաների վրա հիմնված տնտեսություն կամ պարզապես համացանցային տնտեսություն, կամ ուղղակի նոր տնտեսություն:

[22] Տե՛ս Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կայքէջ, Թռչնամսի շրջանառության ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքները, 2021, 86 էջ, http://competition.am/wp-content/uploads/2022/03/Trchnamis-2.pdf

«Թվային տնտեսություն» եզրը համեմատաբար նոր է. առաջին անգամ կիրառվել է 1994 թվականին՝ կանադացի գիտնական Դոն Թափսքոթի կողմից, նրա «Թվային տնտեսությունը. համացանցային բանականության դարաշրջանի խոստումները և վտանգները» (The Digital Economy: Promise and Peril in the Age of Networked Intelligence) գրքում, որտեղ ներկայացված է համացանցի նոր նշանակությունը և դրա ազդեցությունը բիզնեսի, անհատի և հասարակության վրա: Հեղինակը, միաժամանակ, ներկայացնում է տեղեկատվական հոսքերի հնարավոր վտանգները՝ ծավալելով միջազգային բանավեճ նոր տնտեսությանն ու նոր հասարակությանն անցում կատարելու հարցի շուրջ[23]:

Վերջին տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի մասնակցությունը գլոբալ արժեքային շղթաներին տպավորիչ աճ է գրանցել: Հայաստանին բարձր մրցունակություն ապահովող հիմնական գործոնը համեմատաբար էժան և մրցունակ մարդկային ռեսուրսների առկայությունն էր 2000-ականների սկզբներին, ինչը նպաստեց, որ օտարերկրյա SS կազմակերպություններն իրենց մասնաճյուղերը բացեն Հայաստանում: Սակայն վերջին տարիներին ոլորտում նկատվում են խորքային փոփոխություններ, և տարիներ շարունակ գերակշռող արտապատվիրման մոդելին աստիճանաբար փոխարինում է սեփական արտադրության ստեղծման և ձեռներեցության զարգացման մոդելը: Անշուշտ, այս մոդելն առավել ռիսկային և ավելի շատ ներդրումներ է պահանջում, այնուամենայնիվ, սա տնտեսության մեջ երկարաժամկետ և որակական փոփոխություններ ապահովող հիմնական ճանապարհն է: Գործնականում ստարտափ ընկերությունների գործունեությունն ավելի լայն շրջանակ է ընդգրկում, քան SS ոլորտը: Այս ձեռնարկությունները կոչված են տնտեսության մեջ բերելու որակական և նորարարական փոփոխություններ բոլոր ուղղություններով՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի, շինարարության և ծառայության ոլորտներում:

Համեմատության համար հարկ է նշել, որ ստարտափ ընկերությունները զգալի մասնաբաժին ունեն ԱՄՆ-ում աշխատատեղերի ստեղծման գործում, մասնավորապես՝ նոր աշխատատեղերի 70 տոկոսը ստարտափ ընկերություններում է ստեղծվում: Ուշագրավ է, որ ԵՄ երկրներում ստարտափներն ապահովում են ՀՆԱ 9,5 տոկոսը: Աճի ուժեղ դինամիկա ունեցող նորարարական ընկերություններն ունեն դրական ազդեցություն ՀՆԱ աճի վրա: Միևնույն ժամանակ, ստարտափները խթանում են նորարարությունը, արագացնում ինստիտուցիոնալ բարեփոխումներն ու բարձրացնում արտադրողականությունը՝ ստեղծելով նոր ապրանքային շուկաներ[24]:

Ստարտափ ընկերությունների կայունությունը չափանիշ է, որի վրա ազդում են բազմաթիվ փոփոխականներ: ՏՀԶԿ երկրների վերջին տվյալների

---

[23] Տե՛ս Don tapscott, The Digital Economy, 1994, էջ 342, https://dontapscott.com/books/the-digital-economy/

[24] Տե՛ս **Ziakis Ch., Vlachopoulou M.** and **Petridis K.**, Start-Up Ecosystem (StUpEco): A Conceptual Framework and Empirical Research, Journal of Open Innovation: Technology, Market, and Complexity, 2022, էջ 2, https://mdpi-res.com/d_attachment/JOItmC/JOItmC-08-00035/article_deploy/JOItmC-08-00035-v2.pdf?version=1644561707

ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ստարտափ ընկերությունների գոյատևման միջին մակարդակը հիմնադրումից երեք տարի հետո կազմում է 60 տոկոս, մինչդեռ 5-րդ և 7-րդ տարիներին, համապատասխանաբար՝ 50 և 40 տոկոս: Երկրների միջև տարբերությունները մեկնաբանվում են տարբեր որոշիչ գործոններով, որոնք առնչվում են նորարարական ձեռներեցության համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ կարողություններին՝ դրանով իսկ ընդգծելով ստարտափ էկոհամակարգերի զարգացման կարևորությունը[25]:

Յուրաքանչյուր տարի «StartupBlink» ընկերությունը գնահատում է ստարտափ էկոհամակարգերի զարգացվածության վարկանիշները՝ վերլուծելով աշխարհի 100 երկրների և 1000 քաղաքների ստարտափ էկոհամակարգերի տվյալները: Սույն վարկանշավորման համար հիմք են հանդիսանում երեք կարևոր չափանիշներ՝

I. ստարտափ էկոհամակարգի քանակական ցուցանիշը՝ թե քանի ստարտափ ընկերություն և աջակցող կազմակերպություն է գործունեություն ծավալում էկոհամակարգում,
II. որակական ցուցանիշը՝ ինչպիսի արժեք են ստեղծում գործող կազմակերպություններն իրենց էկոհամակարգի համար,
III. գնահատվում է առկա գործարար միջավայրի նպաստավորությունը ստարտափ ընկերությունների զարգացման գործում:

Ըստ «StartupBlink» ընկերության 2022 թ. «Ստարտափ էկոհամակարգերի գլոբալ համաթվի» ցուցանիշների՝ Հայաստանը ստարտափ էկոհամակարգերի վարկանշային աղյուսակում զբաղեցնում է 60-րդ տեղը՝ 2021 թվականի համեմատությամբ բարելավելով իր դիրքը 5 կետով (Global Startup Ecosystem Index 2022, 217): Ըստ զեկույցի հեղինակների՝ Հայաստանի ստարտափ էկոհամակարգը լավագույնն է Հարավային Կովկասում՝ չափանիշների գնահատականով կրկնակի գերազանցելով Վրաստանին: Հայաստանի միակ գլխավոր ստարտափ կենտրոն է դիտարկվում Երևանը, որն իր հերթին 38 հորիզոնականով բարելավել է իր դիրքերը՝ առաջին անգամ մուտք գործելով աշխարհի 250 քաղաքների ցանկ և զբաղեցնելով 244-րդ տեղը 1000 քաղաքների շարքում[26]:

Հայաստանի Հանրապետությունում ստարտափ ընկերություններ ստեղծվել են դեռևս 2004 թվականին, երբ գոյություն չուներ հստակ ձևավորված ստարտափ էկոհամակարգ, պակասում էին համապատասխան ենթակառուցվածքները: Աջակցող կազմակերպությունների թիվը խիստ սահմանափակ էր (գործում էին միայն մեկ բիզնես-ինկուբատոր և երկու տեխնոպարկ), չկային աքսելերացման ծրագրեր, ներդրում կատարող վենչուրային կապիտալի հիմնադրամներ և բիզնես-հրեշտակների ցանցեր: Այնուամենայնիվ, այդ ժամանակահատվածում ստեղծված որոշ ստարտափ ընկերություններ կարողացան մուտք գործել միջազգային շուկաներ և հասնել հաջողության, ինչը սկիզբ դրեց Հայաստանում ստարտափ-էկոհամակարգի ձևավորմանը:

Ավելի մեծ թվով ստարտափ ընկերություններ սկսեցին ստեղծվել 2014 թվականից, երբ Հայաստանում բացվեց առաջին վենչուրային հիմնադրամը՝

---

[25] Տե՛ս **Motoyama Y., Knowlton K.,** Examining the Connections within the Startup Ecosystem: A Case Study of St. Louis. Entrep. Res. J. 2017, էջ 448–470:

[26] Տե՛ս Global startup Ecosystem Index 2022, report, էջ 5:

«Գրանատուս Վենչուրսը»: Այդ ժամանակվանից հայկական ստարտափ էկոհամակարգն ավելի բուռն զարգացում ունեցավ, քանի որ վենչուրային հիմնադրամի բացմանը հաջորդեց տեխնոլոգիական կենտրոնների բացումը նաև Հայաստանի այլ մեծ քաղաքներում (Գյումրի, Վանաձոր)՝ խթանելով մարզային բնակչության ներգրավվածությունը տեխնոլոգիական ստարտափ ձեռնարկատիրության ոլորտում:

Զուգահեռաբար ձևավորվող բիզնես-հրեշտակների ցանցերը (BANA, AICA, STAN), տարբեր ինկուբացիոն և աքսելերացիոն ծրագրերը, մատչելի աշխատանքային տարածքներ առաջարկող ենթակառուցվածքների ցանցի ընդլայնումը, ինչպես նաև ավելի մեծածավալ միջոցառումների կազմակերպումը, որոնցում ներգրավված են միջազգային հեղինակություն ունեցող մենթորներ, խորհրդատուներ, ներդրողներ, նպաստեցին Հայաստանում ստեղծվող ստարտափ ընկերությունների թվի տարեցտարի աճին[27]: Հայաստանի անկախության տարիների ամբողջ ընթացքում ՏՏ կազմակերպությունների թիվը շարունակաբար աճել է, ինչը վկայում է այս ոլորտի մրցունակության մասին, մասնավորապես՝ միայն 2021 թվականին, 2020-ի համեմատությամբ, ընկերությունների թիվն ավելացել է 8,31 տոկոսով:

Աղյուսակ 2

ՏՏ ոլորտի կազմակերպությունների քանակը 1990–2021 թթ.[28]

Տարի	*ՏՏ ձեռնարկությունների քանակ*	*Աճի տեմպ, %*
1990	3	-
1991	6	100
1992	11	83.33
1993	11	0
1994	11	0
1995	15	36.36
1996	23	53.33
1997	31	34.78
1998	34	9.68
1999	43	26.47
2000	55	27.91
2001	66	20
2002	83	25.76
2003	105	26.51
2004	123	17.14
2005	150	21.95
2006	185	23.33
2007	223	20.54
2008	262	17.49
2009	297	13.36
2010	324	9.09

[27] Տե՛ս **Արշակյան Ք.,** հայկական ստարտափ էկոհամակարգի բաղադրիչային ազդեցությունները և զարգացման խնդիրները, «Գիտական Արցախ», N 3(14), 2022, էջ 204-222, https://cyberleninka.ru/article/n/the-effects-of-components-and-development-challenges-of-the-armenian-startup-ecosystem/viewer

[28] Աղյուսակը կազմվել է՝ հիմք ընդունելով «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի 2019 թվականի Հայաստանի ՏՀՏ ոլորտի հետազոտության հաշվետվության և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության տրամադրած տվյալները:

2011	345	6.48
2012	363	5.22
2013	379	4.41
2014	396	4.49
2015	450	13.64
2016	540	20
2017	650	20.37
2018	828	23.08
2019	981	22.63
2020	1203	22.63
2021	1303	8.31

Հայաստանի տնտեսության վերափոխումների ճանապարհին կարևոր հանգրվաններից մեկը 2017 թվականին հիմնադրված «Թվային Հայաստան» նորարարական հաբն է, որը ստեղծվել է Հայաստանի կառավարման համակարգի, տնտեսության և հասարակության թվային փոխակերպմանն աջակցելու, տեխնոլոգիական ոլորտում Հայաստանի հաջողությունները աշխարհին ներկայացնելու նպատակով: «Թվային Հայաստանի» հիմնական նպատակն է ոգեշնչել թվային լուծումների ընտրության հարցում, բարձրացնել թվային գրագիտության մակարդակը և խթանել նորարարությունը: 2022 թվականին «Թվային Հայաստան» կազմակերպությունը գործարկել է digital-armenia.am էլեկտրոնային ռեսուրսների շտեմարանը, որը հնարավորություն է տալիս ծանոթանալու պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր ընկերությունների կողմից ստեղծված էլեկտրոնային ռեսուրսներին[29]: Այս հարթակի տեղեկատվությունը պարբերաբար թարմացման և համալրման կարիք ունի, որին կարելի է հասնել պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ:

Թվային տնտեսության զարգացումը Հայաստանի Հանրապետության համար առաջնահերթ ուղղություններից է: Մասնավորապես՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված տվյալների համաձայն՝ 2022 թվականին, 2021-ի համեմատությամբ, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը արձանագրել է 75,7 տոկոս աճ, այդ թվում՝ համակարգչային ծրագրերի հրատարկության շրջանառությունն ավելացել է 2,4 անգամ, ծրագրային ապահովման մշակումը և հարակից գործողությունների ծավալը՝ 80,7 տոկոսով, տվյալների մշակման, ցանցերում տեղեկատվության տեղաբաշխման ծավալը՝ 20,1 տոկոսով[30]: Հարկ է նշել, որ ՏՏ ոլորտի այս աննախադեպ աճը հիմնականում պայմանավորված է Հայաստան տեղափոխված և ՏՏ նոր ընկերություններ բացող ռուսաստանցիներով: ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրապարակած տեղեկատվության համաձայն՝ 2022 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին Ռուսաստանի քաղաքացիները Հայաստանում բացել են 7328 տնտեսավարող սուբյեկտ, այդ թվում՝ 2345 ՍՊԸ և 4983 ԱՁ: Այս ընկերությունների մեծ մասը զբաղվում է ծրագրային ապահովման մշակմամբ՝ միաժամանակ ստեղծելով բարձր վարձատրվող հազարավոր նոր աշխատատեղեր[31]:

[29] Տե՛ս https://www.digital-armenia.am/hy

[30] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, https://www.armstat.am/file/article/sv_12_22a_126_.pdf

[31] Տե՛ս https://politik.am/am/2022-tvakani-hunvaric-dektember-rd-i-qaxaqacinery-hh-um-bacel-en-aveli-qan-7000-tntesvarox-subyekt

Ուշագրավ է, որ 2022 թվականին ՏՏ ոլորտում օտարերկրյա ներդրումներն արվել են Իռլանդիայից, Նիդեռլանդներից, Ռուսաստանից և ԱՄՆ-ից[32]:

2022 թվականը, անցած տարիների համեմատությամբ, տեղական ՏՏ ընկերությունների համար ճգնաժամային տարի էր, ինչը պայմանավորված էր դրամի մոտ 20 տոկոս արժևորմամբ: Իրավիճակը մեղմելու նպատակով 2022 թվականի դեկտեմբերի 1-ին ՀՀ Կառավարությունը հաստատեց «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին պետական աջակցության տրամադրման կարգը», ըստ որի՝ Կառավարությունն աջակցություն կտրամադրի ՏՏ ոլորտի այն կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին (շուրջ 10 մլրդ դրամի չափով), որոնք 2022 թվականի հունիս–հոկտեմբեր ամիսներին իրենց աշխատակիցներին վճարվող աշխատավարձային ֆոնդը 20 տոկոսից ավելի չեն կրճատել[33]:

Եզրակացություններ: Այսպիսով՝ «Արդյունաբերական քաղաքականության մասին» ՀՀ օրենքը պետք է գործադրվի՝ նորմատիվ իրավական համապատասխան ակտերով և ծրագրային հիմնավորումներով: Օրինակ՝ դիտարկելով հանրապետության արդյունաբերական քարտեզը, պետք է արձանագրել, թե որ արդյունաբերական աշխարհագրական տարածքներն են, որ կարող են հավակնել ձևավորելու արդյունաբերական գոտիներ: Հայաստանի համար ռազմավարական նշանակություն կարող է ունենալ մշակող արդյունաբերության, մետալուրգիայի, մեքենաշինության, քիմիական արդյունաբերության ոլորտների զարգացումը՝ ինքնաբավության հասնելը:

Այդ տարածքներում պետք է լինեն համապատասխան ենթակառուցվածքներ (ճանապարհներ, երկաթուղային գիծ, արտադրական մակերեսներ, գործիքաշինական արտադրամասեր և այլն):

Առաջին հայացքից՝ դրան կարող են հավակնել, օրինակ, Չարենցավան կամ Հրազդան քաղաքները: Այս փուլում կարելի է նախապատվությունը տալ Չարենցավանին: Տվյալ համատեքստում կարևոր է նաև հեռավորությունը մայրաքաղաք Երևանից:

Վերոնշյալին պետք է հետևի համապատասխան պետական մարմինների կողմից արդյունաբերական գոտու բաղադրիչների, այն է՝ ենթակառուցվածքների, արտադրական մակերեսների, պետական և ոչ պետական սեփականությամբ օբյեկտների բացահայտումը: Սակայն նախ պետք է համապատասխան բարենպաստ իրավական և տնտեսական կարգավորումների դաշտ ձևավորել՝ հարկային արտոնություններ, պետության համասեփականություն, ինչպես նաև, այսպես կոչված, արդյունաբերության հիպոթեկային վարկավորման նոր համակարգի ներդրում:

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ բնակարանաշինության ծավալների աճը կարող է շարունակվել մինչև 2025 թվականը, երբ կավարտվի եկամտային հարկի վերադարձման ռեժիմը, սակայն մինչև այդ շուկայի գերհագեցումը, գնողունակ պահանջարկի նվազումը և բացասական սպասումները կարող են հանգեցնել անշարժ գույքի գների անկմանն ու աճի կրճատմանը:

---

[32] Տե՛ս https://www.armstat.am/file/article/sv_02_23a_420.pdf

[33] ՀՀ Կառավարության կայքէջ, https://www.e-gov.am/sessions/archive/2022/12/01/

Հայաստանի առանձին շուկաների մրցակցության և կարգավորման առումով կարևոր է հասկանալ տեղական արտադրողների ծավալների ավելացման ներուժը, հակառակ դեպքում հնարավոր է ներմուծման ծավալների կրճատում և, որպես վերջնարդյունք, շուկայում կենտրոնացվածության մակարդակի բարձրացում, մասնավորապես՝ առաջին անհրաժեշտ մի շարք ապրանքների մասով՝ հավի միս, կաթնամթերք և այլն:

Հայաստանի ՏՏ ոլորտում օտարերկրյա ներդրումների ծավալը շատ փոքր է, այնուամենայնիվ, 2022 թվականի ընթացքում դրանք ավելացել են, մասնավորապես՝ ծրագրային ապահովման մշակման, խորհրդատվությունների և հարակից գործունեության համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում օտարերկրյա ներդրումների ընդհանուր զուտ հոսքը կազմել է 2 017,3 մլն դրամ, որը 2021 թվականի համեմատությամբ ավելի է 336,7 մլն-ով կամ 20 տոկոսով: ՏՏ ոլորտը կշարունակի դինամիկ աճել՝ պայմանավորված ռուսական ընկերությունների գործունեության ակտիվությամբ: Այնուամենայնիվ, ներկայիս գերարժևորված դրամը մեծ վնաս է հասցնում տեղական ՏՏ ընկերություններին, քանի որ նրանք շարունակում են իրենց աշխատակիցների աշխատավարձերը վճարել դրամով, այն դեպքում, երբ պայմանագրերը և հասույթը ԱՄՆ դոլարով են:

Օգտագործված գրականություն

1. Արշակյան Ք., Հայկական ստարտափ էկոհամակարգի բաղադրիչային ազդեցությունները և զարգացման խնդիրները, «Գիտական Արցախ», N 3(14), 2022, https://cyberleninka.ru/article/n/the-effects-of-components-and-development-challenges-of-the-armenian-startup-ecosystem/viewer
2. Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին»՝ ընդունված 2014 թվականի դեկտեմբերի 1-ին:
3. ՀՀ Կառավարության կայքէջ, https://www.e-gov.am/sessions/archive/2022/12/01/
4. ՀՀ կենտրոնական բանկի կայքէջ, https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx
5. ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, https://armstat.am/am/?nid=12&id=07001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC
6. ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, https://www.armstat.am/file/article/sv_12_22a_126_.pdfhttps://politik.am/am/2022-tvakani-hunvaric-dektember-rd-i-qaxaqacinery-hh-umbacel-en-aveli-qan-7000-tntesvarox-subyekt
7. ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, https://www.armstat.am/file/doc/99536113.pdf
8. ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, Հետաքրքրաշարժ վիճակագրություն, https://armstat.am/file/article/sv_12_22a_6200.pdf
9. ՀՀ ֆինանսների նախարարության կայքէջ, https://minfin.am/hy/page/_hy_chart_/
10. Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ, Հայաստանի ՏՀՏ ոլորտի հետազոտության հաշվետվություն, 2019:

11. Մելքումյան Մ. և ուրիշ., Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում, ուսումնական ձեռնարկ, Եր., 2018:
12. Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կայքէջ, Թռչնամսի շրջանառության ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքները, 2021, http://competition.am/wp-content/uploads/2022/03/Trchnamis-2.pdf https://news.am/arm/news/757825.html
13. Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կայքէջ, Կաթի և կաթնամթերքի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաների ուսումնասիրության արդյունքները, 2021, http://competition.am/wp-content/uploads/2022/03/Diary-1.pdf
14. Don tapscott, The Digital Economy, 1994, https://dontapscott.com/books/the-digital-economy/
15. Global startup Ecosystem Index 2022.
16. https://news.am/arm/news/757825.html
17. https://www.digital-armenia.am/hy
18. Intarnational Monetary Fund, World Economic Outlook Update, Inflation Peaking amid Low Growth, 2023 JAN, https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2023/01/31/world-economic-outlook-update-january-2023
19. Motoyama Y., Knowlton K., Examining the Connections within the Startup Ecosystem: A Case Study of St. Louis. Entrep. Res. J. 2017.
20. National Statistics Office of Georgia, https://www.geostat.ge/en/modules/categories/23/gross-domestic-product-gdp
21. Statista, https://www.statista.com/statistics/271376/inflation-rate-in-russia/

МИКАЕЛ МЕЛКУМЯН
Заведующий кафедрой микроэкономики АГЭУ, доктор экономических наук, профессор

СУРЕН ПАРСЯН
Доцент кафедры микроэкономики АГЭУ, кандидат экономических наук

АРТУР АРАКЕЛЯН
Доцент кафедры микроэкономики АГЭУ, кандидат экономических наук

ЗАРУИ МЕЛКУМЯН
Доцент кафедры микроэкономики АГЭУ, кандидат экономических наук

Основные направления, обеспечивающие экономический прогресс РА в условиях глобальных геополитических сдвигов.– Глобальные геополитические сдвиги, произошедшие в 2022 г., существенно изменили закономерности и правила экономической жизни, в результате чего практически во всех государствах появились также проблемы экономической безопасности. Эта неопределенность экономического развития не обошла стороной и нашу страну. С одной стороны создаются отдельные элементы оживления экономической жизни, с другой - новые риски. Имея слаборазвитую экономику, Республика Армения в максимальной степени несет на себе как положительные, так и отрицательные последствия вышеуказанных экономических изменений. Поэтому целью данной статьи является изучение и совершенствование основных направлений, обеспечивающих значительный прогресс Армении. Различные направления экономической политики должны быть согласованы. В противном случае их эффективность может быть очень низкой. В настоящее время секторами, обеспечивающими экономический рост экономики Армении, являются строительство, информационные технологии, промышленность, банковское дело и общественное питание. Несмотря на серьезные успехи некоторых армянских IT-стартапов на международном уровне, следует отметить, что количество стартап-компаний, разрабатывающих глобальные решения и выходящих на международные рынки, очень мало, что не способствует более быстрому и стабильному развитию экосистемы.

Ключевые слова: *промышленность, строительство, конкуренция, информационные технологии, стартапы*
JEL: L60, L74
DOI: 10.52174/29538114_2023.2-7

MIKAEL MELKUMYAN
Head of Chair of Microeconomics, Doctor of Economics, Professor

SUREN PARSYAN
Associate Professor at the Chair of Microeconomics,
PhD in Economics

ARTHUR ARAKELYAN
Associate Professor at the Chair of Microeconomics,
PhD in Economics

ZARUHI MELKUMYAN
Associate Professor at the Chair of Microeconomics,
PhD in Economics

Main Pillars Ensuring Economic Progress of the RA Amid Global Geopolitical Shifts.– Global geopolitical shifts that took place in 2022 significantly changed the patterns and rules of global economic life, resulting in problems of economic security in almost all countries. These uncertain perspectives of economic development also impacted our country. On the one hand, some elements of revitalization of economic life are emerging, on the other hand, new risks are appearing. Having an underdeveloped economy, the Republic of Armenia faces both positive and negative consequences of the above-mentioned economic changes to a great extent. Therefore, the aim of this paper is to study and improve the main directions that will ensure the tangible economic progress of Armenia. Different directions of economic policy should be coordinated. Otherwise, their effectiveness can be very low. Currently, Armenia's economic growth is driven by sectors such as construction, IT, industry, banking and catering. While some Armenian IT startup companies achieved success internationally, it should be noted that the number of startup companies developing global solutions and entering international markets is very small, which does not contribute to the faster and more stable development of the ecosystem.

Keywords: *industry, construction, competition, information technologies, startups*
JEL: L60, L74
DOI: 10.52174/29538114_2023.2-7